ՀԱՅԱՍՏԱՆ

Նոյեմբերի 7, 2023 թ.

Առանցքային տվյալներ.

101,848
փախստական ապաստան է գտել Հայաստանում

ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից տրամադրված ոչ պարենային ապրանքներ (ՈՊԱ)

7,817 անկողնային պարագա

7,314 ծածկոց

7,242 բարձ

3,997 ներքնակ

3,385 ծալովի մահճակալ

2,421 հիգիենայի պարագա

1,399 խոհանոցային հավաքածու

Ֆինանսավորում.

14.6 միլիոն ԱՄՆ դոլար
Է պահանջվում 2023- 2024 թթ., այդ թվում՝ արտակարգ իրավիճակին արձագանքելու համար

Ֆինանսավորված՝ 46%

Պակասող ֆինանսավորում՝ 54%

6.7 մլն ԱՄՆ դոլար
է ստացվել առ 2023 թ. նոյեմբեր 7

Իրավիճակի վերաբերյալ թարմ տվյալներ

Մոտ 101,848 փախստական է հաշվառվել Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության կողմից: 2023 թ. նոյեմբերի 3-ին Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը հայտարարեց, որ Հայաստանում ապաստան գտած փախստականները, որոնք ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ են ստացել, կենսաթոշակի համար կարող են դիմել Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ:

ՄԱԿ ՓԳՀ արձագանքն արտակարգ իրավիճակին

Փախստականների պաշտպանություն

- 2023 թ. նոյեմբերի 6-ին ՄԱԿ ՓԳՀ-ն Հայաստանում ապաստան գտած փախստականների համար **15,000 ժամանակավոր պաշտպանության (ԺՊ) վկայագրի նմուշ է** տրամադրել՝ աջակցելու Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությանը եւ ապահովելու, որ փախստականները կարողանան ստանալ իրենց ԺՊ փաստաթղթերը:
- Նոյեմբերի 1-ից սկսած ՄԱԿ ՓԳՀ-ն պաշտպանության մշտադիտարկում է իրականացրել յոթ համայնքներից **330 անձանց (68 ընտանիք)** շրջանում: Նրանց ուղղորդել են դիմել ՄԱԿ ՓԳՀ գործընկերներին եւ ծառայություն մատուցող ազգային մարմիններին՝ ստանալու ՈՊԱ, առողջապահական, իրավաբանական, դրամական, ապաստանի, ինչպես նաեւ հոգեկան առողջության եւ հոգեբանասոցիալական աջակցություն:
- Այս տարվա հոկտեմբերի 1-ից ՄԱԿ ՓԳՀ թեժ գծին ԼՂ փախստականներից 1,580 զանգ է ստացվել, որից 80-ը՝ հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 3-ի ընթացքում: Զանգերի 48%-ը վերաբերել է կացարանի, 27%-ը՝ անկողնային հավաքածուների, 25%-ը՝ սննդամթերքի, 18%-ը կենցաղային իրերի, 10%-ը՝ հիգիենայի պարագաների, իսկ 8%-ը՝ առողջապահական ծառայությունների կարիքին: ՄԱԿ ՓԳՀ թեժ գծին զանգահարած փախստականներն ուղղորդվում են դիմելու վերջինիս գործընկերներին՝ պաշտպանության հետագա մշտադիտարկման նպատակով:

ՄԱԿ ՓԳՀ-ն եւ «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն Սյունիքի Կապան քաղաքի համայնքների փախստականներին կենցաղային իրեր բաժանեցին: Հոկտեմբեր, 2023 թ. © UNHCR

Ապաստան եւ ոչ պարենային ապրանքներ (ՈՊԱ)

- 2023 թ. հոկտեմբերի 3-31-ը ՄԱԿ ՓԳՀ-ն իր գործընկեր «Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի միջոցով Երեւանում եւ ՀՀ ութ մարզերում բնակվող **2,332 ընտանիքի՝ 10,792 փախստականի 30,907** ՈՊԱ տրամադրեցին:
- Հոկտեմբերի 31-ից ՈՊԱ-ով բարձված **28 բեռնատար** ավտոմեքենա է մուտք գործել Հայաստան: Առաջիկայում մասնավոր նվիրատուների կողմից ձմեռային հագուստով ավելի մեծ թվով բեռնատարներ են սպասվում:

Համակարգում

Նոյեմբերի 6-ին ՄԱԿ ՓԳՀ-ն եւ գործընկերները հրապարակեցին Միջգործակալական ընթացիկ ամփոփման 4-րդ թողարկումը:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է դոնոր կառույցներին աջակցության համար. Բելգիա | Կանադա | Դանիա | Ֆրանսիա | Գերմանիա | Իռլանդիա | Ճապոնիա | Նիդեռլանդներ | Նորվեգիա | Լեհաստան | Շվեդիա | Շվեյցարիա| Միացյալ Թագավորություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մանրամասն տեղեկությունների համար կապ հաստատել. ՄԱԿ ՓԳՀ Հայաստանի գրասենյակ.
armye@unhcr.org, www.unhcr.org